ՀՀ Սահմանադրական դատարանին

Դիմող՝

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ»
(պետական ռեգիստրի վկայական 03Ա 070486
Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 59, 2001, Հայաստան
նախագահ Արթուր Ալբերտի Սաքունց

Ներկայացուցիչ՝

Արայիկ Միքայելի Զալյան
Բնակվող՝ ք. Վանաձոր Ուսանողական 5/18
2019, Հայաստան

Ծանուցման հասցե՝

Տիգրան Մեծի 59 շ,
ք. Վանաձոր, 2001, Հայաստան

Դ Ի Մ Ո Ի Մ

(ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ, 67-րդ, 68-րդ, 69-րդ այնքանով, որքանով սահմանափակում է Իրավապաշտպան կազմակերպությանը դատական, պաշտպանություն ստանալու իրավունքը ՀՀ Սահմանադրության 3, 6, 18, 19-րդ հոդվածներին, հակասող և անվավեր ճանաչելու մասին)

ՀՀ Սահմանադրական դատարան ենք դիմում՝ իրացնելով Սահմանադրության 101 հոդվածի 6-րդ կետում ամրագրված «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Իրավապաշտպան կազմակերպություն) իրավունքները:

1. Գործի դատավարական նախապատմությունը և փաստերի շարադրանքը.

1.1. 2013թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման ժամանակ կատարել է հայտարարություն Մաքսային միությանը միանալու մասին, որը երկկողմ ստորագրվել և հրապարակվել է www.president.am կայքէջում: Վկայակոչված հայտարարությանը հաջորդել է ՀՀ կառավարության կողմից 2013թ. սեպտեմբերի 19-ին հրավիրված նիստի N 37 արձանագրային որոշումը, ըստ որի կազմվել է «Մաքսային միությանն անդամակցելու նպատակով իրականացվելիք առաջնահերթ միջոցառումների» ցանկը՝ միարժամանակ որևէ կերպ չանրադառնալով ՀՀ կառավարության կողմից 2009թ. մինչ 2013թ. իրականացրած[1] նախապատրաստական աշխատանքները Եվրոպական Միության հետ ասոցացման համաձայնագրի կնքումը[2]:

---

[1]. Տես՝ կից փաստաթղթերում 4.12-րդ կետում 1-ին հավելվածը

[2]. Տես՝ կից փաստաթղթերում 4.13-րդ կետում 2-րդ հավելվածը

1.2. 2013 թվականի նոյեմբերի 26-ին Իրավապաշտպան կազմակերպության կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ Նախագահի միանձնյա և անակնկալ որոշման՝ պահանջելով ճանաչել ոչ իրավաչափ ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները (անգործությունը):

1.3. 2013թ. նոյեմբերի 27-ին Դատարանը կայացրել է որոշում՝ կազմակերպության կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, որը պատճառաբանվել է հետևյալ կերպ.

Դատարանը գտել է, որ «(.....) միջազգային պայմանագրեր կնքելու և դրանց շուրջ բանակցություններ վարելու Հանրապետության Նախագահի լիազորության իրագործման միջոցով պետության արտաքին քաղաքականության ղեկավարման գործառույթը և դրանից բխող առանձին գործողությունները *ենթակա չեն վարչադատական վերահսկողության, դրանք ենթարկվում են զսպման և հակակշռման ուրույն կառուցակարգերով*: (.....)

Ամբողջ վերը նշված վերլուծության և եզրահանգման հիման վրա դատարանը փաստում է, որ ներկայացված հայցը, որով վիճարկվում են ՀՀ Նախագահի գործողությունները, ենթակա չէ դատարանում քննության»: (.....)

1.4. 2013թ. դեկտեմբերի 17-ին կազմակերպությունը համաձայն չլինելով կայացված դատական ակտի հետ ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ պահանջելով հայցադիմումի ընդունումը մերժել, վերացնել ՀՀ Վարչական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 27-ին թիվ ՎԴ-10973/05/13 վարչական գործով կայացված որոշումը:

1.5. 2014թ. հունվարի 23-ի ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը կայացրել է որոշում վերաքննիչ բողոքը մերժելու մասին, որը պատճառաբանվել է հետևյալ կերպ.

(....) ՀՀ վարչական դատավարության օրենգրքի 66-69-րդ հոդվածներով բերվում է այն հայցատեսակների սպառիչ ցանկը, որպիսի հայցեր կարող են ներկայացվել և միայն այդ պարագայում պահանջը կարող է ենթակա լինել ՀՀ վարչական դատարանում քննության: Վերը նշված հոդվածների բովանդակությունից բխում է, որ վարչական դատարանում լայն իմաստով կարող են վիճարկվել միայն այն ակտերը, **որոնք իրենցից ներկայացնում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով նախատեսված վարչական ակտեր, ինչպես նաև այն գործողությունները (անգործությունը), որոնք իրենցից ներկայացնում են նույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված *վարչարարության գործընթացում* տեղի ունեցող գործողություն կամ անգործություն:** Տվյալ դեպքում խոսքը գնում է արտաքին քաղաքականության բնագավառում ՀՀ Նախագահի կողմից իրականացրած գործունեության մասին:

Ամբողջ վերոշարադրյալի հիմքով Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարում վարչական դատարանի եզրահանգումն առ այն, որ **«միջազգային պայմագրեր կնքելու և դրանց շուրջ բանակցություններ վարելու Հանրապետության Նախագահի լիազորության իրագործման միջոցով պետության արտաքին քաղաքականության ղեկավարման գործառույթը և դրանից բխող առանձին գործողությունները ենթակա չեն վարչադատական**

<u>վերահսկողության, դրանք ենթարկվում են զսպման և հակակշռման ուրույն կառուցակարգերով»:</u> (...):

1.6. 2014թ. փետրվարի 4-ին կազմակերպության կողմից բողոք է ներկայացվել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2014թ. հունվարի 23-ի կայացրած վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշման դեմ:

1.7. 2014թ. փետրվարի 26-ին ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է որոշում՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին, այն պատճառաբանելով, որ վճռաբեկ բողոքը չի ստորագրվել փաստաբանի կողմից, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ և 158-րդ հոդվածի 4-րդ մասերը:

1.8. 2014թ. ապրիլի 9-ին փաստաբանի միջոցով կրկին անգամ վճռաբեկ բողոք է ներկայացվել ՀՀ վճռաբեկ դատարանի 2014թ. հունվարի 23-ի կայացրած վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշման դեմ:

1.9. 2014թ. մայիսի 14-ին ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է որոշում ներկայացված վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը մերժելու մասին, այն պատճառամաբանությամբ, որ ստորադաս դատարանների կողմից թույլ չեն տրվել նյութական կամ դատավարական խախտումներ:

<u>2. Դիմումի փաստարկները և պատճառաբանությունները</u>

<u>Իրավապաշտպան կազմակերպության համար բացասական իրավական հետևանքներ է առաջացրել ՀՀ վարչական, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների[3] (այսուհետ՝ Դատարաններ) կողմից նրա նկատմամբ, կիրառված և Դատարանների որոշումներում անմիջականորեն վկայակոչված, ՀՀ</u> վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ, 67-րդ, 68-րդ, 69-րդ օրենսգրքի հոդվածները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ընդունվել է 05.12.2013թ., ուժի մեջ է մտել 07.01.2014թ.:

2.1. Դիմումի սույն կետով վիճարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենքի 66-րդ, 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածները այնքանով, որքանով չի ներառում վարչական մարմնի կողմից արտաքին քաղաքականության իրականացման արդյունքում դրսևորած գործողության կամ անգործության արդյունքում կայացրած վարչական ակտի վիճարկումը ՀՀ վարչական դատարանում:

2.1.1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի.

ՀՀ «Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝

6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը. ...»:

---

[3] Տես՝ սույն դիմումի փաստերի շարադրանք բաժնի 1.2-1.9-րդ կետերը:

Սահմանադրական դատարանն իր՝ 25.02.2011թ ՍԴՈ-943 որոշման մեջ հանգել է այն եզրակացության, որ.

«Սահմանադրական դատարանը ելնում է այն հիմնարար դրույթից, որ սահմանադրական արդարադատության իմաստը սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորումն է, և ոչ մի ընթացակարգային նորմ կամ դրա ոչ հստակ ձևակերպում չի կարող սահմանադրական գործառույթի իրացման խոչընդոտ հանդիսանալ»:

2.1.2. ՀՀ կողմից 2002 թվականի ապրիլի 26-ին վավերացված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների դատական, ինչպես նաեւ պետական այլ մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: (....)»:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2010թ. սեպտեմբերի 7-ին թիվ 906 որոշման 7-8-րդ կետերում ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական և իրավական պետության, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում հասարակական կազմակերպությունների՝ պետությունում ունեցած դերի և նշանակության մասին արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«Քաղաքացիական հասարակությունն ինքնուրույն և պետությունից անկախ հասարակական մեխանիզմների և հարաբերությունների համակարգ է, որը պայմաններ է ապահովում կոլեկտիվների և անհատների մասնավոր շահերի և պահանջմունքների բավարարման համար: Քաղաքացիական հասարակության բաղադրատարր հանդիսացող սոցիալական կառուցակարգերի շրջանակում ուրույն տեղ են զբաղեցնում հասարակական կազմակերպությունները: Վերջիններիս դերն ինքնանպատակ չէ, քանի որ, **նախ՝** միավորումների գործունեությունը նախատեսված է Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական

կոնվենցիայով, **երկրորդ՝** հասարակական կազմակերպություններն ունեն կոլեկտիվների եւ անհատների մասնավոր շահերի եւ պահանջմունքների իրացմանը, այդ թվում՝ հանրային կառավարմանը մասնակցելու գործառույթ, **երրորդ՝** հասարակական կազմակերպությունների միջոցով է, որ հասարակությունը հնարավորություն է ստանում հասարակական հսկողություն եւ վերահսկողություն սահմանել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման նկատմամբ: Այս հանգամանքը, հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ առկա է ոչ թե անհատի, այլ իրավունքի կոլեկտիվ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքների կամ օրինական շահերի խախտում:

Հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների դերը պետության եւ քաղաքացիական հասարակության կյանքում, առաջնորդվելով վերջիններիս գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպությունների համար, որպես իրավաբանական անձ, կարող է սահմանել տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը՝ հաշվի առնելով actio popularis բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները:

Նման իրավակարգավորումը կնպաստեր ոչ միայն խախտված իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության, այդ թվում դատական պաշտպանության արդյունավետության, այլև կբարձրացներ քաղաքացիական հասարակության բաղադրատարրը հանդիսացող՝ հասարակական կազմակերպությունների դերը: Ընդ որում, ուրիշի խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգը սահմանելիս հարկ կլինի հաշվի առնել միայն այն հասարակական կազմակերպություններին, **որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը**»:

Վերը վկայակոչված իրավական մեկնաբանությունից կարելի է պնդել, որ հասարակական կազմակերպությունը[4], որի տեսլականն է՝ «Մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն», և ռազմավարական նպատակները բխում են տեսլականից կարող է ՀՀ նախագահի գործողությունների (որոնք անբարենպաստ պայմաններ են ստեղծում ՀՀ քաղաքացիների համար) իրավաչափությունը վիճարկել ՀՀ վարչական դատարաններում:

2.1.3 Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի բաղադրիչներից մեկն է դատարան դիմելու իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների: Բայց և այնպես, *կիրառվող սահմանափակումները չպետք է նեղացնեն կամ նվազեցնեն անձի իրավունքներն այնպես կամ այն աստիճան, որ թուլացնեն իրավունքի բուն էությունը:* Ընդ որում, սահմանափակումն անհամատեղելի կլինի 6 հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ

[4]. Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

նպատակ չհետապնդի և թե չլինի ողջամիտ հավասարակշռության կապ գործադրված միջոցների և հետապնդվող նպատակի միջև[5]:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ գլուխը՝ մասնավորապես 66-69-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատարանների կողմից կիրարկվել են ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի, դրա արդյունավետ իրացումն ապահովող, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում կարևորված՝ որոշակիության, մատչելիության և արդյունավետ միջոցների իրավական երաշխավորված չափորոշիչներին հակառակ:

Այսպես, դիմումատուիս դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումը ՀՀ դատարանների կողմից պատճառաբանվել է նրանով, որ ՀՀ վարչական դատարանում վիճարկվող ՀՀ նախագահի 2013թ. սեպտեմբերի 3-ին Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունների իրավաչափությունը, **պետության արտաքին քաղաքականության ղեկավարման գործառույթ է և ենթակա չէ վարչական դատարանի վերահսկողությանը**[6]:

Հիմք ընդունելով ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված «վարչարարություն» եզրույթի սահմանումը, ինչպես նաև նույն օրենքի 53, 69 և 96-րդ հոդվածները՝ կարելի է եզրակացնել, որ դատավարական օրենսգիրքը պետք է նախատեսի համապատասխան իրավակարգավորում՝ վարչական մարմնի գործողության կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցով վարչական դատարան դիմելու իրավունքի ապահովում նաև վարչական մարմինների արտաքին քաղաքականության արդյունքում վարչարարությամբ դրսևորած գործողությունների կամ անգործության դեպքում:

Վարչական արդարադատության համակարգում օրենսդիրը վարչական դատավարությամբ նպատակ է հետապնդել սահմանելու այնպիսի իրավական կարգավորում, որը կերաշխավորեր անձանց դատական պաշտպանության իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունվող վարչական և նորմատիվ ակտերի, նրանց գործողությունների և անգործության դեմ: Որպես Վարչական դատավարության օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածների արդյունավետ իրացումն ապահովող իրավական երաշխիք, օրենսգրքում ներառել է «Գործի քննությունը և լուծումը վարչական դատարանում» վերտառությամբ երկրորդ բաժինը և վերջինիս ներքո՝ «Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները» վերտառությամբ 12-րդ գլուխը: Այն նախատեսում է վարչական

5 . Տես՝ mutatis mutandis, Paykar Yev Haghtanak Ltd. v. Armenia, no. 21638/03, judgment of 20 December 2007, § 44; Khalfaoui v. France, no. 34791/97, § 35, ECHR 1999IX, and Papon v. France, no. 54210/00, § 90, ECHR 2002VII; Guérin v. France, judgment of 29 July 1998, Reports 1998V, p. 1867, § 37; Zvolský and Zvolská v. the Czech Republic, judgment of 12 February 2003, §§ 4647:

6 . Տես՝ սույն դիմումի 1.5-րդ կետը

դատարան ներկայացվող հայցերի հետևյալ տեսակները՝ **վիճարկման** հայց (օրենսգրքի 66-րդ հոդված), **պարտավորեցման** հայց (օրենսգրքի 67-րդ հոդված), **գործողության** կատարման հայց (օրենսգրքի 68-րդ հոդված) և **ճանաչման** հայց (օրենսգրքի 69-րդ հոդված), որոնց միջոցով անձինք անմիջականորեն ձեռնամուխ են լինում իրենց խախտված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությանը:

Սույն գործով վարչական դատարանները սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթներին տվել են այնպիսի մեկնաբանություն, ըստ որի՝ վարչական մարմնի արտաքին քաղաքականության իրականացման բնագավառում դրսևորած գործողության ոչ իրավաչափ ճանաչելու հայցապահանջը դուրս է վարչական դատարանի վերահսկողությունից:

2.1.4. Հիմք ընդունելով նախորդ կետում արտահայտած դիրքորոշումը կարելի է պնդել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում գործածված «վարչական ակտ» եզրույթը ներառում է «անգործության և գործողություն» ակտեր, որը սույն գործի շրջանակներում ՀՀ նախագահի կողմից ընդունվել էր արտաքին քաղաքականություն իրականացնելիս: Այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարությունը չի նախատեսում վարչական մարմնի կողմից արտաքին քաղաքականություն իրականցնելու շրջանակներում ընդունված վարչական ակտերի վիճարկումը ՀՀ վարչական դատարան, ստեղծում է անորոշություն, ինչպես նաև երկիմաստ ու հայեցողական մեկնաբանությունների հնարավորություն է տալիս, որը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, հոդվածը ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-69-րդ հոդվածներից կարելի է եզրակացնել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի սահմանում այն բոլոր իրավական մեխանիզմները, որոնք կապահովեն ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին և 3-րդ, 66-րդ, 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս պնդելու նաև վարչական մարմինների արտաքին քաղաքակականության արդյունքում ընդունված վարչական ակտի դեմ դատական պաշտպանության իրավունքները, և իրավակիրառողը պետք է ելնի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխում կիրառվող իրավանորմերի մեկնաբանությունից, հաշվի առնելով, որ

Ա. ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 1-ին և 3-րդ հոդվածներով սահմանված՝ օրենսդրի նպատակից և իրավակարգավորման ուղղվածությունից բխում է, որ նշված հոդվածները դատական պաշտպանության հնարավորություն են նախատեսում նաև վարչական մարմնի արտաքին քաղաքականության բնագավառում ընդունված ակտերի պարագայում,

Բ. օրենսդիրն օրենսգրքի որևիցե մի դրույթում չի առանձնացնում և չի տարբերակում վարչական մարմնի կողմից ընդունված ակտերը ըստ ներքին կամ արտաքին քաղաքականության բնագավառների,

Գ. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

ՀՀ նախագահի 2013թ. սեպտեմբերի 3-ին ընդունված ակտը (գործողություն, անգործություն) պարունակում է վարչական ակտի հատկանիշներ կազմող բոլոր տարրերը:

Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի իմաստով[7]՝ «Յուրաքանչյուր գործով վարչական ակտի հատկանիշների պարզաբանման համար դատարանները պետք է գնահատեն վիճարկվող ակտի ստորև նշված հատկանիշները՝

1) այն անհատական իրավական ակտ է՝ ուղղված Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամագրմանը, որը հանգեցնում է ՀՀ քաղաքացիների իրավունքների և պարտականությունների սահմանմանը,

2) այն ընդունվել է վարչական մարմնի՝ ՀՀ նախագահի կողմից.

«ՀՀ վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Վարչական մարմիններ են՝ «Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները»:

ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի մեկնաբանությունը տրված է 2010թ. ապրիլին հրատարակված «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ» գրքում, վկայակոչված գրականության մեկնաբանության արդյունքում, հեղինակները եկել են այն եզրակացության, որ «Հանրապետության Նախագահը գործադիր իշխանության կրողներից մեկն է, իսկ նրա կարգավիճակը՝ որպես պետության գլուխ, և դրա հետ կապված տարբեր խնդիրները և գործառույթները հիմնականում ներդաշնակ են կիսանախագահական կառավարման մոդելում գործող իշխանությունների բաժանման յուրահատկություններին[8]:

Տվյալ մեկնաբանությունը թույլ է տալիս պնդելու, որ ՀՀ նախագահի պաշտոնը վարչական է և ի սկզբանե նրա կողմից իրականացվում է վարչարարություն, ուստի նրա գործողությունները կամ անգործությունը ենթակա է վիճարկման ՀՀ վարչական դատարանում:

3) այն ունի արտաքին ներգործություն՝ կարգավորում է Մաքսային միության կազմում ՀՀ մաքսային վարչարարության բովանդակությունը կազմող ՀՀ քաղաքացիների իրավունքները և պարտականությունները,

4) այն ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում՝ կարգավորում է 2000թ. հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության ստեղծման համաձայնագրով» սահմանված պայմանավորվող կողմերի միջև առաջացած հարաբերությունները:

---

7. Տես՝ թիվ 3-918(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 06.07.2007 թվականի որոշումը:

8. Տես՝ 2010թ. ապրիլին հրատարակված ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ գրքի 571 և 572 էջերը

5) այն հետապնդում է կոնկրետ գործի կարգավորման նպատակ, ուղղված է մաքսային վարչարարության բնագավառում ՀՀ քաղաքացիների իրավունքների և պարտականությունների կարգավորմանը և սահմանմանը՝ ՀՀ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև իրավունքների և պարտականությունների սահմանման շրջանակում:

6) այն ուղղված է ՀՀ համար պարտականություններ սահմանելուն, այն է՝

Մաքսային միությանը միանալու վերաբերյալ պետությունների իրավունքները և պարտականությունները սահմանված են 2000թ. հոկտեմբերի 10-ի «Եվրասիական տնտեսական միության ստեղծման համաձայնագրում» վկայակոչված համաձայնագրի 13-րդ և 15-րդ հոդվածներով, որով սահմանված է՝ « (....) յուրաքանչյուր պայմանավորվող կողմի ձայների քանակը համապատասխանում է իր կողմից Միության բյուջեում ԵվրԱզԷՍ-ի մարմինների պահպանման և մշտական ներկայացուցիչների հանձնաժողովի նիստերի անցկացման համար կատարվող ներդրման մասնաբաժնով:

Այսինքն, կարելի է պնդել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը Մաքսային միությանը անդամակցելով, Մաքսային միության կողմից կարող են ընդունվել այնպիսի որոշումներ, որոնք իրենց բնույթով անբարենպաստ պայմաններ կստեղծեն ՀՀ քաղաքացիների համար, դրանք կունենան իմպերատիվ բնույթ, այսինքն՝ պարտադիր կատարման ենթակա, որը կտրածվի ՀՀ քաղաքացիների իրավունքների և պարտականությունների վրա:

Հետևաբար ՀՀ նախագահի 2013թ. սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները, (անգործություն) ակտը որպես վարչական ակտ Դատարանների կողմից չընդունելը, այն պատճառաբանությամբ, որ արտաքին քաղաքականության բնագավառում ՀՀ նախագահի գործողությունների արդյունքում ընդունված ակտերը դուրս են վարչական վերահսկողությունից այնքանով, որքանով որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում արտաքին քաղաքականության հետևանքով ընդունված վարչական ակտերի վիճարկումը ՀՀ վարչական դատարանում, հակասում է ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

3. **Սույն Դիմումի ընդունելիությունը.**

Իրավապաշտպան կազմակերպության նկատմամբ՝ սույն դիմումի հիմքում ընկած՝ թիվ ՎԴ/10973/05/13 գործով օրենքի սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթները կիրառվել են ՀՀ վարչական դատարանի (27.11.2013թ.) ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (23.01.2014թ.), ՀՀ վճռաբեկ դատարանի 14.05.2014թ. որոշումներով:

Վճռաբեկ դատարանի 14.05.2014թ. որոշումը Իրավապաշտպան կազմակերպությանը հայտնի է դարձել դրա փոստով ստանալու օրը՝ 27.05.2014թ:

ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու համար «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետն ավարտվում է վերջնական դատական ակտն ընդունելու (դրա մասին հայտնի դառնալու) պահից՝ 2014

թվականի մայիսի 27-ից վեց ամիս հետո: ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու ժամկետը սպառվում է 2014թ նոյեմբերի 27-ին:

Հետևաբար՝ ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու վեցամսյա ժամկետը սպառված չէ:

Սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթները չեն ապահովում և պաշտպանում Իրավապաշտպան կազմակերպության՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված «սահմանադրական դատարանի իրավունքը», իրավական պետություն սկզբունքները, այդ թվում՝ իրավական որոշակիության սկզբունքները, պետության կողմից մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման և պաշտպանություն պարտականության սկզբունքները և արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքները: Ըստ մեզ, առկա է սույն դիմումը վարույթ ընդունելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ ենթակետի հիմքը (« ... սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով՝.... 3) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.»):

Վիճարկվող նորմը հակասահմանադրական և անվավեր ճանաչվելու դեպքում, Իրավապաշտպան կազմակերպությունն իր դեմ կայացված դատական ակտը վերանայելու (գործը նորոգելու) հնարավորություն կստանա, ինչն՝ իր հերթին, Իրավապաշտպան կազմակերպության իրավունքների պաշտպանության և վերականգնման հավանականություն կստեղծի:

Հաշվի առնելով վերոգրյալ պատճառաբանությունները և առաջնորդվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 27, 28, 68, 69-րդ հոդվածներով ՀՀ Սահմանադրական դատարանից

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ՝

ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ, 67, 68-րդ և 69-րդ հոդվածները այնքանով, որքանով սահմանափակում են արտաքին քաղաքակության բնազավառում ՀՀ Նախագահի իրականացրած գործողությունների արդյունքում ընդունված վարչական ակտերի վիճարկումը ՀՀ վարչական դատարանում, ճանաչել ՀՀ Սահմանադրության 3, 6, 18, 19, հոդվածներին հակասող և անվավեր:

4. դիմումին կցվող նյութեր

4.1. Իրավապաշտպան կազմակերպության կողմից 04.11.2014թ Արայիկ Զալյանին տրված լիազորագրի պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.2.Արայիկ Զալյանի բարձրագույն իրավաբանական կրթություն ունենալու մասին վկայող դիպլոմի պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.3. Արայիկ Զալյանի անձնագրի պատճենը:

4.4.Իրավապաշտպան կազմակերպության կանոնադրության և պետական ռեգիստրի պատճենը:
4.5. Պետական տուրք վճարելու վերաբերյալ անդորրագիր (20.000,00 դրամ արժեքով):
4.6. 2013 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումի պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.7.2013թ. նոյեմբերի 27-ին վարչական դատարանի որոշման պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14)
4.8. 2013թ. դեկտեմբերի 17-ի ՀՀ վարչական վերաքննիչ դատարան ներկայացված վերաքննիչ բողոքի պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.9. 2014թ. հունվարի 23-ի ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշման պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.10.2014թ. փետրվածի 4-ի ՀՀ վճռաբեկ դատարան ներկայակցված վճռաբեկ բողոքի պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.11. 2014թ. փետրվարի 26-ի ՀՀ վճռաբեկ դատարանի բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճենը ՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.12. 2014թ. ապրիլի 09-ին ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացված վճռաբեկ բողոքի պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.9. 2014թ. մայիսի 14-ի ՀՀ վճռաբեկ դատարանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.10. վճռաբեկ դատարանի որոշումը 2014 թվականի մայիսի 27-ին ստանալը հավաստող փոստային ծրարի պատճենը՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.11.ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 66-րդ, 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածների պաշտոնական տեքստերը
4.12. Հավելված 1. ՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14):
4.13. Հավելված 2. ՝ թղթային և էլեկտրոնային կրիչով (խտասկավառակ 4.14.):
4.14. Խտասկավառակ:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ»
հասարակական կազմակերպության
նախագահ՝ Արթուր Սաքունց

Ներկայացուցիչ՝ Արայիկ Զալյան

12 .11.2014թ.